«ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ
ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՎՀՀ - 00138021

«Association of accountants of small and middle entrepreneurship of Armenia»
Non Governmental Organization

«Ассоциация бухгалтеров малого и среднего предпринимательства Армении»
Общественная Организация

(011) 60 00 00 www.aasmea.am info@aasmea.am founder@aasmea.am www.facebook.com/aasmea.ngo

ՀՀ, ք.Երևան, Արաբկիր ՎՇ, Վաղարշյան 12, 5-րդ հարկ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի ՓՄՁ հաշվապահների ասոցիացիա» հասարակական կազմակերպության գործունեության մասին

1. Հայաստանի ՓՄՁ հաշվապահների ասոցիացիան հիմնադրվել է **2014թ. նոյեմբերի 10-ին**՝ Հայաստանում գործող մի քանի տասնյակ հաշվապահական հաշվառման գրասենյակների ներկայացուցիչների նախաձեռնությամբ: Այն հասարակական մասնագիտական միավորում է, որի առաքելությունն է աջակցել Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ հաշվապահական և հարկային հաշվառման համակարգի և գործունեության զարգացմանը: Ասոցիացիայի գլխավոր նպատակներից է ՓՄՁ ոլորտի հաշվապահների մասնագիտական-սոցիալական պատասխանատվության բարձրացմամբ նպաստել ՓՄՁ ոլորտի կայացմանը և քաղաքացիական հասարակության զարգացմանը: Առաքելության իրագործման նպատակով Ասոցիացիան ակտիվորեն համագործակցում է բազմաթիվ հաշվապահների և ՓՄՁ ոլորտի ներկայացուցիչների հետ, կազմակերպում և անց է կացնում նրանց վերապատրաստման և ուսուցման դասընթացներ, ապահովում է իրավական ակտերով և մասնագիտական գրականությամբ, իրականացնում է օրենսդրական խորհրդատվություններ:
2. Ասոցիացիան 2019 թվականի ապրիլի 1-ի դրությամբ ունի **շուրջ 400 ակտիվ անդամ** հաշվապահներ և **6316 շահառու** տնտեսվարող սուբյեկտներ, որոնք «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի իմաստով համարվում են գերփոքր և փոքր ձեռնարկատիրության սուբյեկտներ: Անդամների և շահառուների հետ համատեղ կազմակերպվում են տարբեր հանդիպում-քննարկումներ, վեր են հանվում ՓՄՁ ոլորտի զարգացման հիմնախնդիրները, մշակվում են լուծումներ, առաջարկությունների փաթեթներ, որոնք Ասոցիացիան ներկայացնում է համապատասխան պետական մարմիններ:
3. Ասոցիացիայի կենտրոնական գրասենյակը գտնվում է ք.Երևան, Վաղարշյան 12 հասցեում, ԱԿՑԵՌՆԻ շենքի 5-րդ հարկում, սակայն Ասոցիացիան մարզային 30 քաղաքներում ունի տարածքային գրասենյակներ, այդ թվում՝ Մեղրի, Կապան, Գորիս, Սիսիան, Եղեգնաձոր, Վեդի, Արտաշատ, Մասիս, Էջմիածին, Արմավիր, Աշտարակ, Ապարան, Թալին, Արթիկ, Գյումրի, Վանաձոր, Ստեփանավան, Ալավերդի, Նոյեմբերյան, Բերդ, Իջևան, Դիլիջան, Մարտունի, Գավառ, Սևան, Վարդենիս, Հրազդան, Չարենցավան, Աբովյան Եղվարդ:
4. 2014թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին մասնակցել ենք ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից մարզերում և Երևան քաղաքում կազմակերպված հարկային օրենսդրության փոփոխությունների վերաբերյալ իրազեկումներին:

5. 2014թ. նոյեմբերի 28-ին մասնակցել ենք Համաշխարհային բանկի FIRST նախաձեռնության ծրագրի շրջանակներում մշակված կորպորատիվ ֆինանսական հաշվետվողության ոլորտի ռազմավարության ու գործողությունների ծրագրի արդյունքների և առաջարկների քննարկմանը:
6. 2015թ. հունվարի 29-ին Ասոցիացիան նախաձեռնեց բաց քննարկում, որին մասնակցում էին տարբեր պետական մարմինների աշխատակիցներ, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, հաշվապահական հաշվառման և աուդիտորական ընկերությունների ղեկավարներ, ՓՄՁ ոլորտի ներկայացուցիչներ: Քննարկմանը ներկայացվեց Ասոցիացիայի առաքելությունն ու նպատակները, Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ հաշվապահների կողմից մատուցվող ծառայությունների առկա որակի մակարդակը և գործնականում հաճախակի հանդիպող խնդիրները, որոշակիորեն հիմնավորվեց ՓՄՁ հաշվապահների կրթության, իրազեկման, շարունակական մասնագիտական զարգացման, որակի և վերահսկողական համակարգերի ներդրման անհրաժեշտությունը:
7. ՀՀ ֆինանսների նախարարի 2015 թվականի փետրվարի 9-ի թիվ 61-Ա հրամանով Ասոցիացիան ընդգրկվել է ՀՀ ֆինանսների նախարարության հարկային խորհրդի կազմում և ակտիվ մասնակցել ՀՀ հարկային օրենսգրքի մշակման հետ կապված քննարկումներին, ներկայացրել է 68 առաջարկ, որից 64 առաջարկն ընդունվել է:
8. 2015թ. հուլիս ամսին «ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության» «Հարկային բարեփոխումների ծրագրի» և «Ասիական զարգացման բանկի» համաֆինանսավորմամբ Ասոցիացիայի կողմից մշակվեց և հրատարակվեց «ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ» գիրքը: Երևան, Կապան և Էջմիածին քաղաքներում կազմակերպվեցին գրքի շնորհանդեսներ: Շնորհանդեսների ընթացքում, ինչպես նաև դրանից հետո գրքի 1000 օրինակ անվճար բաժանվեց շահառուներին:
9. 2015 թվականի հոկտեմբերի 16-ին Հայաստանի ՓՄՁ հաշվապահների ասոցիացիայի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության միջև կնքվեց համագործակցության ՀՈՒՇԱԳԻՐ: Հուշագրով Ասոցիացիան և Գործակալությունը իրենց իրավասությունների շրջանակներում սկսեցին աջակցել փոքր ձեռնարկատիրության զարգացմանը և բնակչության զբաղվածության ապահովմանն ուղղված համատեղ ծրագրերի և նախագծերի իրականացմանը: Հուշագրի շրջանակում Ասոցիացիայի շահառու հանդիսացող ՓՄՁ սուբյեկտներին օժանդակման նպատակով վերջիններիս հետ իրականացվել է մոտ երկու հարյուրից ավել տարբեր ծրագրեր, մասնավորապես՝ «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորում» և «Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում»:
10. 2015 թվականի դեկտեմբեր ամսին Ասոցիացիան մասնակցեց «ԱՍ» մրցանակաբաշխությանը և Հայաստանի Հանրապետությունում «Տարվա լավագույն հասարակական գործիչ» անվանակարգում հաղթող ճանաչվեց Ասոցիացիայի նախագահ ՎԱՀԱԳՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԸ:
11. 2016 թվականից պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության Երևան քաղաքի և մարզային քաղաքների տարածքային կենտրոնների ղեկավարների և Հայաստանի ՓՄՁ հաշվապահների ասոցիացիայի ներկայացուցիչների հետ: Հանդիպման ընթացքում գործակալության աշխատակիցները ստանում են իրենց հուզող հարկային օրենսդրությանը վերաբերող մի շարք հարցերի պատասխաններ, որոնք վերաբերում են նորաստեղծ ՓՄՁ սուբյեկտների գործունեությանը:

12. 2016 թվականի մարտի 19-ին Ասոցիացիան մասնակցեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Ուսանողական խորհրդի և Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կողմից կազմակերպված «Compass» միջբուհական-ուսանողական աշխատաժողովին: Աշխատաժողովին «ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՄ. ԴՈՒՔ ԱՎԱՐՏԵԼ ԵՔ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ» խորագրով դասախոսությամբ հանդես եկավ Ասոցիացիայի նախագահ ՎԱՀԱԳՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԸ:
13. 2016 թվականի հունիսի 8-ին Ասոցիացիան մասնակցեց Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախաձեռնությամբ Վանաձոր քաղաքում կազմակերպված «Հարկային ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը» թեմայով հակակոռուպցիոն միջոցառմանը: Միջոցառմանը Սոցիացայի նախագահ ՎԱՀԱԳՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԸ հանդես եկավ «Հարկային խնդիրներն ու կոռուպցիոն ռիսկերը փոքր և միջին բիզնեսի ոլորտում» խորագրով զեկույցով:
14. 2016 թվականի հուլիսի 14-ին Ասոցիացիան մասնակցեց «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի շրջանակներում Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախաձեռնությամբ Կապան քաղաքում կազմակերպված «Պետական գնումների և պետական գույքի մասնավորեցման ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը» թեմայով հակակոռուպցիոն միջոցառմանը:
15. ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2016 թվականի հոկտեմբերի 20-ի N 204-Ա հրամանով Ասոցիացիան ընդգրկվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարակական խորհրդի կազմում և ակտիվ մասնակցում է ՀՀ հարկային օրենսգրքի ենթաօրենսդրական ակտերի մշակման հետ կապված քննարկումներին:
16. ՀՀ ֆինանսների նախարարի 2016 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 1487-Ա հրամանով Ասոցիացիան ընդգրկվել է ՀՀ ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության կատարելագործման ընդլայնված խորհրդի կազմում, ակտիվ մասնակցում է ՀՀ հարկային օրենսգրքի ենթաօրենսդրական ակտերի մշակման հետ կապված քննարկումներին:
17. 2016 թվականի դեկտեմբերի 16-ից Ասոցիացիան հանդիսանում է Հայաստանի Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ:
18. 2017 թվականի փետրվարի 15-ից Ասոցիացիան ընդգրկվել է Հայաստանի Գործատուների Հանրապետական Միության խորհրդի կազմում:
19. 2017 թվականից Հայաստանի ՓՄՁ Հաշվապահների Ասոցիացիայի նախագահ ՎԱՀԱԳՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԸ հանդիսանում է ՀՀ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խորհրդի անդամ: Խորհրդի նախագահն է ՀՀ վարչապետը: Խորհրդի հիմնական նպատակն է ապահովել պետության և գործարար համայնքի արդյունավետ երկխոսություն փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում գործարար միջավայրի բարելավման համար:
20. 2017 հոկտեմբերի 19-ին Հայաստանի ՓՄՁ Հաշվապահների Ասոցիացիայի նախագահ Վահագն Համբարձումյանը մասնակցել է Հայաստանի գործատուների հանրապետական միությունը «Միասին» հիմնադրամի հետ համատեղ կազմակերպեց հայ-շվեյցարական բիզնես ֆորում նվիրված սոցիալական ձեռնարկատիրության և արտահանման խթանմանը հայկական և շվեյցարական կազմակերպությունների միջև:
21. 2017 թվականի դեկտեմբերի 6-ին կայացավ ՀԳՀՄ ռազմավարական փաստաթղթի շնորհանդեսը՝ նվիրված ՀՀ-ում բիզնեսի կայուն զարգացման անհրաժեշտ պայմաններին:

    Միջացառումը կազմակերպված էր պանելային քննարկումների տեսքով, որոնց շրջանակում ներկայացված ՀՀ-ում գործարար միջավայրի կայուն զարգացմանը

խոչընդոտող 7 հիմնական խնդիրների վերաբերյալ քննարկում-երկխոսության միջոցով պետական մարմինների ներկայացուցիչները, ճանաչված փորձագետները և գործատուները ներկայացնում էին խնդիրների լուծման ուղիներ: Միջոցառմանը մասնակցել և քննարկվող հարցերի վերաբերյալ իր տեսակետներն է հայտնել Հայաստանի ՓՄՁ Հաշվապահների Ասոցիացիայի նախագահ Վահագն Համբարձումյանը:

22. 2018 թվականի փետրվարի 13-ին International Media Holding-ի ամենամյա մրցանակաբաշխության ժամանակ Հայաստանի Հանրապետությունում «Տարվա հասարակական գործիչ» անվանակարգում հաղթող ճանաչվեց «Հայաստանի ՓՄՁ հաշվապահների ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ ՎԱՀԱԳՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԸ:
23. 2018թ. փետրվարի 19-ից Հայաստանի ՓՄՁ Հաշվապահների Ասոցիացիայի նախագահ Վահագն Համբարձումյանը հանդիսանում է Հանրապետական եռակողմ հանձնաժողովի անդամ:
24. 2018 թ. մարտի 5-ին Հայաստանի ՓՄՁ հաշվապահների ասոցիացիայի նախագահ Վահագն Համբարձումյանը մասնակցեց ՀՀ ֆինանսների նախարար Վարդանի Արամյանի և Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակի տնօրեն տիկին Սիլվի Բոսութղոյի գլխավորությամբ տեղի ունեցած հաշվապահական հաշվառման և աուդիտի ոլորտների բարեփոխումների վերաբերյալ աշխատաժողովին:
25. 2018թ. մարտի 16-ին Հայաստանի ՓՄՁ Հաշվապահների Ասոցիացիայի նախագահ ՎԱՀԱԳՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԸ մասնակցեց Հայաստանի Գործատուների Հանրապետական Միության «Տնտեսություն և գործարարություն» ակումբի նիստին, որին մասնակցում էին նաև ՀՀ ազգային ժողովի պատգամավորներ, ՀՀ կառավարության ներկայացուցիչներ, այլ պաշտոնատար անձինք և գործարարներ: Նիստի ընթացքում քննարկվեցին բիզնես և պետական պաշտոնյաներ սերտաճման, օտարերկրյա ներդրումների նկատմամբ կառավարության գործելակերպի և գործատուների շրջանում բիզնես մշակույթի պակասի հետ կապված մի շարք հարցեր, հնչեցին տարբեր մեկնաբանություններ և առաջարկություններ նշված խնդիրների լուծման համար:
26. 2018 թվականի մայիսի 25-ին Հայաստանի ՓՄՁ Հաշվապահների Ասոցիացիայի նախագահ ՎԱՀԱԳՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԸ մասնակցեց «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում կազմակերպված ՔՀԿ ինկուբատորների և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Սոնա Հարությունյանի հետ հանդիպմանը: Հանդիպման ընթացքում քննարկվեցին սոցիալական ոլորտի մի շարք խնդիրներ:
27. 2018 թվականի հունիսի 1-ին Հայաստանի ՓՄՁ Հաշվապահների Ասոցիացիայի նախագահ ՎԱՀԱԳՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԸ մասնակցեց «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում կազմակերպված ՔՀԿ ինկուբատորների և ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ Կարեն Բրուտյանի հետ հանդիպմանը: Հանդիպման ընթացքում քննարկվեցին ֆինանսական ոլորտի մի շարք խնդիրներ:
28. 2018 թվականի հունիսի 22-ին Հայաստանի ՓՄՁ Հաշվապահների Ասոցիացիայի նախագահ ՎԱՀԱԳՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԸ հանդիպեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտոր Կորյուն Աթոյանի և ուսանողների հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին հաջողակ հաշվապահի կարիերա ստեղծելու և աշխատաշուկայում ինքնահաստատվելու առանձնահատկություններն ու ուղիները: Ասոցիացիայի նախագահի կողմից ներկայացվեց Երևան քաղաքի և ՀՀ մարզերի Ասոցիացիայի անդամ հաշվապահական հաշվառման գրասենյակների թափուր աշխատատեղերն ու դրանց պահանջները:

29. 2018 թվականի հունիսի 26-ին Հայաստանի ՓՄՁ Հաշվապահների Ասոցիացիայի նախագահ ՎԱՀԱԳՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԸ մասնակցեց Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում տեղի ունեցած «Հասարակական կազմակերպությունների արդիական խնդիրների վերհանում և նորարարական առաջարկների ներկայացում» խորագրով միջոցառմանը: Միջոցառմանը մասնակցում էին Պետական եկամուտների կոմիտեի, Արդարադատության նախարարության ու ոլորտային քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներ: Հանդիպման ընթացքում տեղի ունեցավ ներկայացված թեմաների վերաբերյալ կառուցողական քննարկումներ:
30. 2018թ. հուլիսի 16-ին Հայաստանի ՓՄՁ Հաշվապահների Ասոցիացիան համագործակցության հուշագիր ստորագրեց ՀՀ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի հետ, համաձայն որի Ասոցիացիան հարկային օրենսդրության շրջանակներում հանդիսանում է ՀՀ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի պաշտոնական խորհրդատուն:
31. 2018 թվականի նոյեմբերի 2-ին Հայաստանի ՓՄՁ Հաշվապահների Ասոցիացիայի Նախագահ Վահագն Համբարձումյանը ՄԱԿ-ի Երևանյան գրասենյակում մասնակցեց Հայաստանի Գործատուների Հանրապետական Միության կողմից կազմակերպված Սոցիալական գործընկերության 9-րդ Ազգային Կոնֆերանսին: Կոնֆերանսը վերաբերում էր ենթակառուցվածքներով պայմանավորված խնդիրներին էներգակիրների, ՏՏ և հեռահաղորդակցման ոլորտներում, ներմուծման-արտահանման գործընթացներում մաքսային բացթողման հնարավորություններին, ինչպես նաև բեռնափոխադրման խնդիրներին պայմանավորված ճանապարհներով (օդային, ցամաքային՝ ներառյալ երկաթգիծ):
32. 2018 թվականի նոյեմբերի 19-ին Հայաստանի ՓՄՁ Հաշվապահների Ասոցիացիայի նախագահ Վահագն Համբարձումյանը մասնակցեց «Մասնավոր ոլորտում կոռուպցիոն ռիսկերի նվազեցում» թեմայով համաժողովին, որին մասնակցում էին նաև ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնակատար Արտակ Զեյնալյանը, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի պաշտոնակատար Տիգրան Խաչատրյանը, «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը: Համաժողովին ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանը և «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Իննա Մնացականյանը ներկայացրեցին «Մասնավոր ոլորտում կոռուպցիոն ռիսկերի նվազեցում» ծրագրի նկարագրությունը, իրականացված քայլերը և մեթոդաբանությունը:
33. 2018 թվականի դեկտեմբերի 19-ին Հայաստանի ՓՄՁ Հաշվապահների Ասոցիացիայի նախագահ ՎԱՀԱԳՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԸ մասնակցեց Կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային օրվան նվիրված միջոցառմանը: Միջոցառմանը ներկա էին Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարության համակարգող Կարեն Զադոյանը, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանը, ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության հակակոռուպիոն քաղաքականության մշակման բաժնի պետ Մարիամ Գալստյանը և տարբեր հասարակական կազմակերպությունների նախագահներ ու անդամներ: Միջոցառման ընթացքում ներկայացվեց ՀՀ 2019-2022թթ. հակակոռուպցիոն ռազմավարության առաջին նախագիծը: Տեղի ունեցավ հարց ու պատասխան և ակտիվ քննարկում թեմայի շուրջ:
34. 2018 թվականի դեկտեմբերի 20-ին Հայաստանի ՓՄՁ Հաշվապահների Ասոցիացիայի նախագահ ՎԱՀԱԳՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԸ ստորագրեց հուշագիր Հայկական բիզնես

կոալիցիայի ստեղծման համար, որի հիմնադիր անդամը դարձավ նաև Հայաստանի ՓՄՁ Հաշվապահների Ասոցիացիան:

35. ՀՀ փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 13-ի N 442 – Ա որոշմամբ Հայաստանի ՓՄՁ Հաշվապահների Ասոցիացիան ընդգրկվել է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ:
36. 2018 թվականի դեկտեմբերի 20-ին Հայաստանի ՓՄՁ Հաշվապահների Ասոցիացիայի նախագահ ՎԱՀԱԳՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԸ մասնակցեց ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության՝ ՓՄՁ զարգացման խորհրդի ենթախորհրդի առաջին նիստին: Մասնակիցները, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի պաշտոնակատար Տիգրան Խաչատրյանի գլխավորությամբ, քննարկեցին Հարկային օրենսգրքի փոփոխությունների փաթեթը: Քննարկվեցին նաև հսկիչ դրամարկղային մեքենաների պարտադիր կիրառման դրույթի՝ 2019 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտնելու հետ կապված հարցեր:
37. 2018 թվականի դեկտեմբերի 27-ին Հայաստանի ՓՄՁ Հաշվապահների Ասոցիացիայի նախագահ ՎԱՀԱԳՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԸ մասնակցեց «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում ենթադրամաշնորհների տրամադրման հանդիսավոր արարողությունը: Ենթադրամաշնորհ տրամադրվեց ՔՀԿ-ներին Ծրագրի թիրախ 9 ՝ ՀՀ արդարադատության, մարդու իրավունքների, հանրային ֆինանսների կառավարման, բիզնեսի, կրթության, սոցիալական, գյուղատնտեսության, ՏԻՄ տնտեսության, էներգետիկայի ոլորտներում հանրային քաղաքականության մոնիտորինգի և բարելավման ծրագրերի իրականացման համար: Հայաստանի ՓՄՁ Հաշվապահների Ասոցիացիան ենթադրամաշնորհ ստացավ բիզնեսի ոլորտում Հանրային քաղաքականության մոնիտորինգի և բարելավման ծրագիր իրականացնելու նպատակով:
38. 2019 թվականի հունվարի 21-ին տեղի ունեցավ ՀՀ Հանրային խորհրդի «Ֆինանսատնտեսական-բյուջետային հարցերի հանձնաժողովի» նիստ, որը վարեց հանձնաժողովի նախագահ Վազգեն Սաֆարյանը: Նիստի ընթացքում ձևավորվեց «Հարկերի, տուրքերի և այլ վճարների հարցերի ենթահաժողովը»: Ենթահանձնաժողովի նախագահ ընտրվեց Հայաստանի ՓՄՁ Հաշվապահների Ասոցիացիայի նախագահ ՎԱՀԱԳՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԸ:
39. 2019 թվականի փետրվարի 12-ին Հայաստանի ՓՄՁ Հաշվապահների Ասոցիացիայի նախագահ Վահագն Համբարձումյանը մասնակցեց Հայկական բիզնես կոալիցիայի ընդհանուր ժողովին, որի ընթացքում ներկայացվեց Հայկական բիզնես կոալիցիայի համառոտ ծրագիրը, տեղի ունեցավ ՀԲԿ Խորհրդի կազմի և նախագահի ընտրություն: Հայաստանի ՓՄՁ Հաշվապահների Ասոցիացիայի նախագահ Վահագն Համբարձումյանը ընտրվեց ՀԲԿ Խորհրդի անդամ:
40. Ասոցիացիան իր շահառուներից ստացված իրավական ակտերում առկա հակասությունների, երկիմաստությունների կամ տարընթերցումների հետ կապված հարցերով իրավական ակտը կիրառող գործադիր մարմիններ է ուղարկել շուրջ 85 գրություն՝ ներառելով 112 հարց, և ստացված պաշտոնական իրազեկումների մասին տեղեկացրել բոլոր անդամ հաշվապահներին և շահառու հանդիսացող ՓՄՁ սուբյեկտներին:
41. Ասոցիացիան՝ ի դեմս նախագահ Վահագն Համբարձումյանի, մասնակցել է թվով 18 ասուլիսների, որոնց ընթացքում քննարկվել են Հարկային օրենսգրքի հետ կապված տարբեր հարցեր:

42. Իր գործունեության ընթացքում Ասոցիացիայում անդամ հաշվապահների և շահառու ՓՄՁ սուբյեկտների հետ կազմակերպվել է շուրջ 220 սեմինար, որոնց ընթացքում մասնակիցներին տրվել են Հարկային, Աշխատանքային և Հաշվապահական հաշվառման օրենսդրությունների, Ձեռնարկատիրական իրավունքի հետ կապված բազում հարցերի պատասխաններ և իրազեկումներ, ներկայացվել են համակարգչային ծրագրերից օգտվելու և փաստաթղթաշրջանառության վարման հմտություններ:
43. 2019 թվականի փետրվարի 26-ին Հայաստանի ՓՄՁ հաշվապահների ասոցիացիան նամակով դիմել է ՀՀ վարչպետ Նիկոլ Փաշինյանին ՀՀ կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 10-ին ընդունված «Իրավաբանական անձանց պետական գրանցում, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառում իրականացնող մարմնի սպասարկման գրասենյակների գործառույթները նոտարներին, փաստաբանների, փաստաբանական գրասենյակների և այլ անձանց կողմից իրականացվելու կարգը սահմանելու մասին» N 1110-Ն որոշման մեջ փոփոխություններ անելու համար, մասնավորապես՝ փաստաբանական գրասենյակներին զուգահեռ, նման հնարավորություն ընձեռել նաև որոշակի չափանիշներին համապատասխանող հաշվապահական գրասենյակներին (գործող որոշումը նման հնարավորություն չի նախատեսում): Նամակին ի պատասխան 2019 թվականի մարտի 21-ին ՀՀ արդարադատության նախարարությունը e-draft.m կայքում քննարկման ներկայացրեց «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ N 1110-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որում ներառված էր Ասոցիացիայի կողմից առաջարկված դրույթը:
44. Ասոցիացիան իր գործունեության ընթացքում, առնչվելով տարբեր կազմակերպաիրավական տեսակի կազմակերպությունների հետ, բացահայտում և հավաքագրում է այդ կազմակերպությունների ներքին կորպորատիվ հարաբերությունների, ինչպես նաև իրավաբանական անձանց պետական գրանցման հետ կապված տարբեր խնդիրներ, և քանի որ այս ոլորտը գտնվում է ՀՀ արդարադատության նախարարության լիազորությունների շրջանակում, ուստի Ասոցիացիան նպատակ ունի ակտիվորեն համագործակցել և մասնակիցը լինել ոլորտը կարգավորող իրավական ակտերի մշակման գործընթացներում:

Նախագահ՝ **Վահագն Համբարձումյան**

22.04.2019թ.